«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հեքիաթի ուսուցումը՝ կրտսեր դպրոցականների ստեղծարարության զարգացման միջոց

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ՝ Մարտիրոսյան Կարինե Գրիգորի

ՄԱՐԶ՝ Արարատ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նոյակերտի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------

Գրականության ակնարկ----------5

Գործնական համատեքստ ----------

Հետազոտության ընթացք----------9

Եզրակացություն —----------

Գրականություն----------

Ներածություն

«Ամենամեծ ստեղծագործողը ժողովուրդն է , ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը:»

Հովհ. Թումանյան

Հեքիաթը լինելով հայ ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված ու ամենահարուստ ժանրերից մեկը, երբեք չի կորցնում իր արդիականությունը:Հեքիաթներն ստեղծվել են մարդկային հասարակարգի մանկության շրջանում ժողովրդի կողմից, երբ մարդն ի վիճակի չէր թափանցելու շրջապատի բնական ու հասարակական երևույթների էության մեջ, ըմբռնելու դրանց միջև եղած պատճառա-հետևանքային կապը: Հեքիաթների ստեղծման պատճառ են հանդիսացել մարդկանց երազանքները, իղձերը, դժվար ապրելակերպը, ձգտումը առավել լավ, բարվոք կյանքի: Վաղ ժամանակներից մարդիկ երազել են կառավարել բնության ուժերը, ըմբռնել աշխարհում տեղի ունեցող ամեն ինչ, երազել են ազատ աշխատանքի, արդարության և երջանկության մասին: Բոլոր երկրներում մարդկանց երազանքները նման են եղել, բայց ամեն մի ժողովուրդ դրանք արտահայտել է յուրովի: Ժողովրդական այդ երազանքներից ու ակնկալիքներից էլ ծնունդ է առել հեքիաթների զարմանահրաշ աշխարհը, որն ապրում և գոյատևում է իր հատուկ օրենքներով: Այն որպես բանավոր զրույց փոխանցվել է սերնդից սերունդ և եկել հասել մինչև մեր օրերը: Թեման շատ արդիական է, որովհետև տարիներ հետո էլ դրանք հետաքրքրում են փոքրերին և պատանիներին սովորեցնելով սիրել հայրենիքը, մայրենի լեզուն, հարգանք աշխատանքի և աշխատավոր մարդկանց հանդեպ: Հեքիաթն այն հզոր միջոցն է, որը կապ է ապահովում տարբեր ժամանակահատվածներում ապրած մարդկանց միջև: Այսօր էլ շարունակում են ստեղծվել ու հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ: Հեքիաթը մանկությունը հարստացնող հրաշք է, այն մանկան մեջ մշակում է գեղեցիկ զգացողություն, ճաշակ, հետաքրքրությունների ուղղվածություն, մասնագիտական կողմնորոշում, ստեղծարարություն, հարստացնում նրա գիտելիքները, հղկում է բնավորությունը, սերմանում շիտակություն, ազնվություն, հայրենասիրություն: Այն այցելում է մանկության ամենավաղ շրջանում և իր իմաստուն խորհուրդներով ու կենսունակությամբ ուղեկցում ամբողջ կյանքի ընթացքում: Այն ունի դաստիարակչական հզոր արժեք : Այն միաժամանակ բանավոր կապակցված խոսքի, մտածողության և ստեղծարարության զարգացման արդյունավետ միջոց է: Հեքիաթը գեղեցիկ հյուսվածք է, գունագեղությամբ ու գեղարվեստական հնարքներով առանձնացնող ժողովրդական լեզվով համեմված մի գոհար: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը,հերոսների բնավորության պարզությունը,հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են ընթերցումն ու դարձնում ցանկալի:Այդ է պատճառը ,որ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը միևնույն հեքիաթը կարդում են բազմիցս՝ ամեն անգամ նրանում հայտնաբերելով նորը, ուսանելին,գրավիչն ու հետաքրքիրը: Հետազոտական աշխատանքի շրջանակներում մեր առաջ խնդիր ենք դրել ուսումնասիրել հեքիաթների դերը երեխաների ստեղծարարության զարգացման գործում:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հեքիաթն այնպիսի ժանր է, որի մասին խոսել են երեկ, խոսում են հիմա և կխոսեն վաղը: Հեքիաթին անդրադարձել են Թումանյանը, Աղայանը, Ռոդարին, Պուշկինը, Կոլլոդին, Անդերսենը, Գրիմ եղբայրները, Ուշինսկին, Սուխոմլինսկին,Սուրեն Մուրադյանը և այլոք: Հեքիաթներն այսօր էլ շարունակում են ստեղծվել և իրենց անմիջականությամբ , պարզությամբ, լավատեսությամբ ու գրավչությամբ հուզել ընթերցողներին: Հեքիաթի միջոցով գրականության մեջ դրսևորվում է այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը, մտածողության ձևը: Իսկ ահա հեքիաթների դերը մանուկների ստեղծարարության զարգացման գործում ինչպես միշտ, նույնպես և այսօր արդիական է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ: Թեմայի նպատակն է պարզաբանել հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների ստեղծարարության զարգացման և անձի ձևավորման գործընթացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրություն
2. Բացահայտել հեքիաթի դերը երեխայի ստեղծարարության զարգացման գործում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Աշխատանքը կատարել եմ համադրական և վերլուծական մեթոդների օգնությամբ ուսումնասիրության ենթարկելով երեխայի ստեղծարարության զարգացման ողջ ընթացքը՝ վեր հանելով այդ գործընթացում հեքիաթների ունեցած նշանակությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքում փորձ է կատարվել տեսականորեն առաջադրել հեքիաթների գործնական կիրառելիությանը նպաստող մի շարք տեսակետներ, կատարել ընդհանրացումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ստեղծագործության զարգացման, ինչպես նաև աշխատանքում սովորողների ստեղծարար մոտեցման ինքնուրույնության, նախաձեռնողականության դրսևորման կարևորությունը բազմիցս նշվել և կարևորվել է Տ.Բյուզենի, Պ.Տորրենսի, Ռ. Շտենբերգի աշխատություններում, որոնք առավելապես անդրադարձել են ստեղծագործականության հոգեճանաչման և զարգացման հիմնախնդիրներին՝ վերլուծելով և առաջարկելով այնպիսի մեթոդներ, որոնք թույլ կտան ոչ միայն հետազոտել անձի ստեղծագործականությունը, ինքնուրույնությունը, այլև ուղղորդել վերջինիս զարգացմանը և նպաստել նրա դրսևորմանը: Ստեղծագործականության էությունը դիտարկվում է Լ.Գիլֆորդի, Ֆ.Վիլյամսի, Ա.Գրեցովի և այլոց հայեցակարգերում: Ա.Գրեցովի գրքում առանձնացված են ստեղծագործ անձին բնորոշ առանձնահատկությունները: Դրանք են՝ ինքն իրեն որպես ստեղծագործ անձ ընկալելը, յուրօրինակությունը ,անկախությունը, ռիսկի հակվածությունը,

եռանդը,անհասկանալի և բարդ երևույթների նկատմամբ հետաքրքրությունը, նորի հանդեպ ընկալունակությունը, միայնության պահանջը, ինտուիցիան:Ամերիկյան հետազոտող–մանկավարժ Պոլ Տորրենսը իր աշխատության մեջ նշել է, որ ստեղծարարությունը ոչ թե հատուկ,այլ ընդհանուր կարողություն է ,որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և արդյունավետ մտածողության կարողության վրա: Ստեղծարարությունը դրսևորվում է խնդիրը յուրօրինակ տեսնելու մեջ: Այսպիսով, կարող ենք նշել, որ ստեղծարարությունը ուսումնական գործընթաց է, որի նպատակը ստեղծագործ մարդ ձևավորելն է, ով հավատում է իր ուժերին, նախաձեռնող է, ինքնուրույն, վստահում է շրջապատին , ողջ աշխարհին:

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Հեքիաթը հայ ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է: Նրա ստեղծողն ու պահպանողը միայն ժողովուրդն է: Այն բանավոր, արձակ պատմվող հրաշապատում ստեղծագործություն է՝ հիմնված երևակայական հնարանքի վրա, հնարանք, որի բազմապիսի և ավանդական ձևերը չեն կրկնվում բանահյուսության որևէ այլ ժանրում: Հեքիաթը սկզբնապես սերտորեն կապվել է առասպելաբանության, դիցաբանության հետ: Նրանում պատկերված անիրական, անբնական աշխարհին հավատում են լսողները: Նրանց հրապուրում են ոչ միայն բացառիկ դրություններն ու անակնկալները, այլև երևակայական կեղևով պատած ժողովրդական այն իդեալներն ու գաղափարները, այն լավագույնն ու բաղձալին, այն հարուստ կենսափիլիսոփայությունը, որոնցով ողողված են հեքիաթները: Հեքիաթներում արտացոլված են ժողովրդի աշխարհզարգացման ու աշխարհայացքի բովանդակությունն ու բնույթը, դարավոր պայքարը կեղեքիչների դեմ, նրա ազատատենչ և ըմբոստ ոգին, խաղաղ ստեղծագործ աշխատանքի անկոտրում ձգտումը, ժողովուրդների բարեկամությունը, նրա վառ հայրենասիրությունը, լավատեսությունը և բոլոր այն լավագույնը, ինչ ձեռք է բերել նա իր պատմական զարգացման ճանապարհին: Ուշինսկին հեքիաթների մեջ տեսնում էր ժողովրդի հանճարի ուժը, նրա հզոր երևակայությունը: Հեքիաթները սովորաբար բաժանվում են երեք խմբի, որոնցից առաջինը՝ կենդանական, երկրորդը՝ հրաշապատում կամ կախարդական , իսկ երրորդը՝ իրապատում կամ կենցաղային, երգիծական հեքիաթները: Կենդանական հեքիաթները գալիս են վաղնջական ժամանակներից և կապված են նրանց ընտելացման առաջին փորձերի հետ : Ապրելով բնության ծոցում՝ մարդը շատ հաճախ շփվում էր նաև վայրի կենդանիների հետ և ձգտում հասկանալ նրանց: Կենդանական հեքիաթները ժողովրդի մանկության շրջանի ստեղծագործություններ են, որոնց համար բնորոշը ողջ առարկայականի և հատկապես բնության երևույթների և կենդանիների անձնավորումն է, մարդկայնացումը : Երեխաների համար միշտ էլ տարօրինակ է եղել այն հանգամանքը, թե ինչու իրենք խոսում են, իսկ կենդանիներն ու բույսերը չեն խոսում և միանգամայն հավանական են համարում նրանց խոսելու կարողությունը: Այդ կարգի հեքիաթների մեջ կենդանիներն ու գազանները մարդու բարեկամներն են, նրա հավատարիմ օգնականները: Նրանց գազանային գիշատիչ հատկանիշները ետ են մղված. առավել ցայտուն է արտահայտված մարդկայինը, քան կենդանականը: Հանգամանքների բերումով նրանք մերթ զայրանում են, մերթ հանդարտվում, մերթ ատում են, մերթ սիրում, մերթ տխրում

են, մերթ ուրախանում, և այդ նույն զգացողությունները փոխանցվում են փոքրիկներին: Ծագումով և կազմավորմամբ համեմատաբար հին են նաև հրաշապատում կամ կախարդական հեքիաթները: Դրանք սովորաբար սկսվում են <Լինում է, չի լինում>, <Ժուկով-ժամանակով> արտահայտություններով: Այս հեքիաթներում ամեն ինչը հորինված է, տեղը,ժամանակը՝ անորոշ: Այս հեքիաթներում մեծ տեղ է տրվում սյուժեի զարգացմանն օգնող արտաքին ուժերին՝ հրաշք թռչուններին, իմաստունին, թռչող ու խոսող ձիերին, շանը, կատվին, ոգիներին, ծեր կանանց, վհուկներին, անշունչ առարկաներին (սփռոց, թաշկինակ, մատանի, թռչող գորգ, կախարդական փայտիկ) և այլն: Իրապատում կամ կենցաղային հեքիաթներում իսպառ բացակայում են երևակայական հնարքները: Այստեղ նկարագրվում են հասարակական կյանքը, մարդկային, դասային ու դասակարգային փոխհարաբերությունները իրական գույներով: Նրանց մեջ մեծ տեղ է գրավում սատիրան, որը խորապես սոցիալական է ու սպանիչ: Ծաղրվում է հիմարությունը, տգիտությունը, ծուլությունը, երկչոտությունը և այլն: Իրապատում հեքիաթների դրական հերոսներն են՝ գյուղացին, աշխատավորը, ծառան և այլք, բացասականը՝ տերը, դատավորը: Հեքիաթի հիմքում ընկած է շահագործողի և շահագործվողի միջև ընկած պայքարը, որն ավարտվում է շահագործվողի հաղթանակով: Ուսումնասիրելով հեքիաթների տարատեսակները և առանձնացնելով յուրաքանչյուրի առանձնահատուկ գծերը՝ դժվար չէ նկատել, թե ինչ կարևոր նշանակություն ունեն դրանք երեխաների մարդասիրական, բարոյական, գեղագիտական արժեքների ձևավորման, նրանց ընդունակությունների բացահայտման, մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացման գործընթացում: Ըստ այդմ կարելի է ասել, որ հեքիաթները դարեր շարունակ կրթել և դաստիարակել են մանուկներին, առաջացրել սեր աշխատավոր ժողովրդի նկատմամբ և ատելություն տիրողների ու բռնակալների հանդեպ:

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հեքիաթն ունի հսկայական նշանակություն կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Այն համարվում է նրանց տրամաբանական, ճանաչողական, խոսքային ընդունակությունների բացահայտման ու զարգացման միջոց: Այդ տարիքում երեխային անհրաժեշտ է (արտաքին միջավայրի հետ շփվելու և հաղորդակցվելու համար) ձևավորել խոսք: Այսինքն՝ լեզվի միջոցով երեխան զարգանում է: Լեզուն մտքի նյութական արտահայտությունն է, և երեխան դա կիմանա միայն այն ժամանակ, երբ իմաստի հետ միասին ընկալի վառ հուզական երանգավորումը, մայրենի բառի երաժշտության կենդանի թրթիռը: Եթե երեխայի համար հեքիաթ ենք ընթերցում կամ պատմում, ապա անպայման պետք է թույլ տանք, որ երեխան այդ նույն հեքիաթը պատմի, որի հետևանքով էլ կզարգանա նրա խոսքը: Իսկ երեխաների մոտ կապակցված խոսք կառուցելու կարողությունը ոչ միայն անհրաժեշտ է մայրենիի դասերին, այլև ցանկացած այլ առարկայի ուսումնասիրման համար: Հեքիաթները մաթեմատիկային նույնքան հարկավոր են, որքան մաթեմատիկան հեքիաթին: Դրանք անհրաժեշտ են պոեզիային, երաժշտությանը, երազանքին, քաղաքական պայքարին, կարճ՝ ոչ միայն անրջողին, այլև յուրաքանչյուր

լիարժեք մարդու:Փաստորեն հեքիաթը համարվում է այն սկզբնականը, այն առաջնայինը, որի միջոցով ինքնաբերաբար բացահայտվում են երեխաների ընդունակությունները:Երբ երեխան արդեն կարողանում է պատմել հեքիաթը, կարելի է նաև այն բեմականացնել, որի ժամանակ կրտսեր դպրոցականը ամբողջությամբ մտնում է հեքիաթի հերոսների դերի մեջ, ավելի պատկերավոր ու գունեղ է դառնում նրա համար հեքիաթը: Իսկ որպեսզի երեխան կարողանա հորինել, անհրաժեշտ է զարգացնել նրա ստեղծագործական երևակայությունը, որին օգնում է հեքիաթներ ընթերցելը, ապա՝ պատմելը, որոնք հզոր միջոց են բանականության և բարի, մարդկային զգացմունքներ դաստիարակելու համար: Հեքիաթն անշուշտ այն հիանալի միջոցներից մեկն է, որի միջոցով կարող ենք հնարավորություն տալ, որ երեխան առանց դժվարության հորինի զարմանահրաշ պատմություններ: Երեխայի պատմություն հորինելը ստեղծագործական գործողություն է, որը տվյալ դեպքում հետաքրքրում է ստեղծագործական կայծի բացահայտման տեսանկյունից: Այս մեթոդով թե՛ մեկ աշակերտը, թե՛ ամբողջ դասարանը կարող են պատմություն հորինել: Դա կատարվում է հետևյալ կերպ. երկու տարբեր երեխաներ թելադրում են երկու բառ՝ չիմանալով, թե ինչ է ասել մյուսը: Ջանի Ռոդարին իր տրակտատում ներկայացրել է երկու բառով ստեղծված մի պատմություն, որը հորինել է հինգուկես տարեկան մի տղա՝ իր երեք ընկերների հետ: Այնտեղ պատմվում են, թե ինչպես է մի երեխա անընդհատ հագնում հոր կոշիկները: Հայրը զայրանում է, բայց տղան շարունակում է հագնել: Մի անգամ էլ հայրը տղային կապում է ջահից, իսկ ինքը՝ քնում: Կեսգիշերին արթնանում է և տեսնում, որ տղան հատակին ընկած վառվում է: Հայրը ինչ անում է տղան չի հանգում: Այդժամ նա պտտում է տղայի գլուխը, ականջներից է քաշում, քթի ծայրն է սեղմում, թշերից է քաշում, և տղան հանգում է:Փորձենք վերլուծել և պարզել, թե ինչպես է առկայծել երեխայի միտքը, և ինչպես է նա երևակայական թռիչք ապրել: Բոլոր երեխաներն էլ սիրում են հայրիկի ու մայրիկի կոշիկները հագնել, որ ավելի բարձրահասակ լինեն և որ պարզապես մեծ լինեն: Առավել ակնհայտ պատճառը նմանողության մեջ է . եթե տղային էլեկտրական լամպի պես կախել են ջահից, նա իրեն լամպի պես էլ պահում է: Սակայն այստեղ նա վառվում է միայն գետնին ընկնելուց հետո: Նկատելու համար երեխայի երևակայությունը որոշ ժամանակ (մի քանի վայրկյան) է պետք եղել այն պատճառով, որ նմանողությունն անմիջապես չի բացահայտվել, այլ նախ գնացել է այլ առանցքով: Պատմությունը շարունակելիս երեխայի գլխում երկու բառի շուրջ է ինքնուրույն աշխատանք տարվել: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ այս պատմությունն ստեղծելու համար երեխայի մեջ մասնակցել են՝ ենթագիտակցությունը, փորձը, հիշողությունը, գաղափարախոսությունը և վերջապես՝ բառն իր բոլոր գործառույթներով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առկայության պայմաններում մեծ խնդիր է կրտսեր դպրոցական երեխաների մոտ զարգացնել ստեղծագործականությունը,որպեսզի նա կարողանա ստեղծագործ մտածել,ոչ ստանդարտ որոշումներ կայացնել:Այսօր պահանջված են ուրույն մտածողություն ունեցող ,ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված անձինք,ովքեր դժվարին իրավիճակում փորձում են գտնել հնարավորություններ,ունեն ինքնազարգացման և առաջընթացի, նախաձեռնելու մեծ ձգտում:Ստեղծագործական կարողությունները բնորոշ են ցանկացած երեխայի: Դպրոցահասակ երեխաները պետք է ոչ միայն տիրապետեն դպրոցական ծրագրային նյութին, այլև կարողանան այն ստեղծագործաբար կիրառել, լուծում գտնել ցանկացած խնդրի:Իսկ դա հնարավոր է միայն մանկավարժական գործունեության արդյունքում: Մանկավարժները պետք է կարողանան կիրառել սովորողների համար օգտակար և արդյունավետ մեթոդներ: Հետազոտության նպատակն է դիտարկել մայրենիի ժամերին կրտսեր դպրոցականների ինքնուրունության, ստեղծագործական ունակությունները զարգացնելու հնարավորությունները,երեխաների մոտ ձևավորել քննադատական մտածողություն,զարգացնել բառապաշարը,կապակցված խոսք կառուցելու ունակությունները,զարգացնել երևակայությունը,պատմելու, վերապատմելու կարողությունները,արտահայտիչ խոսքի ձևավորումը: Թեմայի ուսումնասիրման համար իմ առջև դրել էի հետևյալ նպատակները.

.Դիտարկել մայրենիի ժամերին կրտսեր դպրոցական երեխաների ստեղծագործական ունակությունները զարգացնելու հնարավորությունները

· Զարգացնել խոսքի և հաղորդակցական կարողություններ

· Զարգացնել հեքիաթի հիմնական գաղափարը ըմբռնելու կարողություններ

· Հարստացնել բառապաշարը

· Զարգացնել երևակայությունը

Նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

· Երեխաների մոտ զարգացնել ստեղծագործականությունը

· Փորձարկել և խթանել երեխաների երևակայական ներուժը,որպես ունակությունների զարգացման գլխավոր գործոն

· Արթնացնել երեխայի ստեղծագործելու ցանկությունը

Այս ամենից ես ականկալում էի հետևյալ վերջնարդյունքները.

Աշակերտը կկարողանա.

· Կառուցել գեղեցիկ և գրագետ կապակցված խոսք

· Առանձնացնել հեքիաթի գլխավոր միտքը, ցույց տալ իրականի և երևակայականի սահմանները

· Շարունակել տեքստը , հորինել փոքրիկ պատմություն, ստեղծագործել

· Համեմատել հեքիաթը իր անցած այլ հեքիաթների հետ, նշել նմանություններն ու տարբերությունները

· Բնութագրել հեքիաթի հերոսներին

Այս ամենից ակնկալում եմ,որ աշակերտները ձեռք են բերելու նախաձեռնողականություն, ազատ հաղորդակցվելու, իմացածը ստեղծագործաբար կիրառելու ունակություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Հետազոտական աշխատանքն իրականացրել եմ 3-րդ դասարանում: Հաշվի առնելով, որ տվյալ դասարանի աշակերտների մի մասի մոտ թույլ էին խոսքի կառուցման հմտությունները, պատմելու, վերապատմելու, իմացածը ստեղծագործաբար կիրառելու ունակությունները, որոշել էի ուսուցման ոչ ավանդական հնարների օգնությամբ զարգացնել այդ երեխաների ստեղծագործական ունակությունները: Նպատակ էի դրել այդ աշակերտների մոտ արթնացնել ստեղծագործելու ցանկությունը, կապակցված խոսք կազմելու հմտությունը: Այդ դասարանում մայրենի առարկայի ուսուցանվող նյութը՝ հեքիաթի ուսուցումը, իրականացրել եմ դասի ոչ ավանդական ձևերով, որպեսզի զարգացնեմ աշակերտների մոտ ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը և ինքնուրույնությունը: Հեքիաթները մեծ հետաքրքրություն են առաջացնում ոչ միայն նախադպրոցական տարիքի երեխաների մոտ, այլև կրտսեր դպրոցականների՝ անկախ նրանց մտավոր ներուժից ու կարողություններից: Ստեղծագործականության, ինքնուրույնության զարգացմանը մեծապես նպաստում են հեքիաթները՝ հեքիաթ հորինելը, նկարելը, պատմելը և այլն: Դասերն ավելի հետաքրքիր դարձնելու համար կիրառել եմ բազմատեսակ մեթոդներ, հնարներ, կազմակերպել եմ ուսումնադաստիարակչական քննարկումներ, էքսկուրսիա մանկական գրադարան,կազմել եմ պատի թերթ «Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ» խորագրով և կատարել այլ աշխատանքներ: Նախ սկզբնական դասի ընթացքում դիտարկել եմ աշակերտների հնարավորությունների, կարողությունների, ստեղծագործականության մակարդակը: Առաջադրել եմ թիրախային խմբի աշակերտներին և հաջորդ դասերի ժամանակ համապատասխան գրավոր առաջադրանքների և բանավոր հարցման օգնությամբ հասել նրանց մոտ ստեղծագործականության մակարդակի աճին, առաջընթացին: Դասերի ընթացքում մեծ ուշադրություն եմ դարձրել աշակերտների երևակայության զարգացմանը: Ստեղծագործականության ցածր մակարդակ ունեցող աշակերտները յուրաքանչյուր դասից հետո ավելի շատ ակտիվություն էին ցուցաբերում, այդ իսկ պատճառով նրանք ավելի շատ աճ ունեցան, քան ստեղծագործականության միջին մակարդակ ունեցող աշակերտները: Դասերի

ժամանակ կազմակերպել եմ նաև մուլտֆիլմերի դիտում,ինչը նպաստում է աշակերտների երևակայության և ուշադրության կենտրոնացմանը:Սովորողների գործնական կարողությունները և հմտությունները ձևավորվում են գործնական աշխատանքների շնորհիվ, որոնք սովորողին մղում են ստեղծագործական դաշտ: Նրանք իրենց նախաձեռնությամբ, ինքնուրույն և ստեղծագործաբար են ներկայացրել նյութը, քննարկել են , նոր վերնագիր հորինել,պատմել հեքիաթը առանց բառերի, շարադրանքը ավարտել , ինչպես նաև համեմատություններ արել: Հատկապես լավ են աշխատել ցածր ակտիվություն ցուցաբերող աշակերտները, ամեն ինչ արել են , որ գովասանքի խոսքեր լսեն, անհասկանալի հարցերի դեպքում շտապել են ճշտումներ անել: Սկզբի դասերին բոլորի մոտ էլ եղան դժվարություններ, բայց դրանք հաղթահարվեցին իրենց համառության, ակտիվության, ինչպես նաև համագործակցության շնորհիվ: Աշակերտները նաև խմբային աշխատանքներ են կատարել: Հաճույքով են աշխատել միմյանց հետ՝ միմյանց օգնելով, լրացումներ անելով: Դասերին կիրառված մեթոդների շնորհիվ զարգացվել է աշակերտի ստեղծագործական կարողությունը, տեքտի վերարտադրման ունակությունը, տեքստի հորինումը, հարստացվել է նրանց բառապաշարը: Այս ամենն օգնել է աշակերտներին ընկալել տեքստի հիմնական գաղափարը, ձևավորել անհրաժեշտ բարոյական համոզմունքներ , ընդլայնվել է աշակերտների հետաքրքրությունների շրջանակը,մարզվել է ընթերցողական հայացքի ճկունությունը, սովորել են հասկանալ տարբեր հերոսների դիրքորոշումն ու մեկնաբանել վարքագիծը: Ինչպես նաև կատարված բառային և տեքստային աշխատանքների շնորհիվ հարստացել է աշակերտի բառապաշարը, զարգացել է ճիշտ ու գրագետ խոսք կազմելու ունակությունը: Դասի ոչ ավանդական ձևերի կիրառումը օգնեց աշակերտներին հեքիաթի գաղափարի ընկալման, հերոսների արարքների դրդապատճառների մեկնաբանություններ, համեմատություններ կատարելու հարցում: Դասի ընթացքում կատարված աշխատանքներից հետո աշակերտները կատարել են քննարկումներ, վերլուծություններ: Յուրաքանչյուր դասին գնահատվել են և՛ բանավոր հարցման, և՛ գրավոր աշխատանքների համար: Դասերի արդյունավետ անցկացման համար շատ կարևոր է հետաքրքրություն ներկայացնող ստեղծագործական մեթոդի ընտրությունը: Այն պետք է լինի նորույթ, հաճելի և գրավիչ, խթանի նրանց հետաքրքրությունը: Ստեղծագործական աշխատանքները մեծ ակտիվություն են առաջացնում հատկապես այն աշակերտների մոտ, ովքեր ակտիվություն չեն ցուցաբերում սովորական դասապրոցեսին: Ես հատկապես կարևորել եմ աշակերտներին սովորեցնել մտածել և նրանց մեջ սերմանել գործնական հմտություններ, որոնք նրանք կկարողանան կիրառել առօրյայում: Հեքիաթի միջոցով ես փորձել եմ նաև աշակերտներին ուղղորդել դեպի մարդկային փոխհարաբերությունների , բարոյագեղագիտական արժեքների աշխարհ, որտեղ նա կդաստիարակվի իբրև ազատ և անկախ մտածողության տեր անհատ՝ ձևավորված գեղագիտական ճաշակով: Հեքիաթի միջոցով ես փորձել եմ զարգացնել նաև կրտսեր դպրոցականների բանավոր և գրավոր խոսքը, խոսքային և հաղորդակցական մշակույթը: Քանի որ լեզվի ուսուցումը բարդ գործընթաց է ,

այդ իսկ պատճառով ես կիրառել եմ նոր մեթոդները, որոնք նոր շունչ են տալիս ուսումնական պրոցեսին՝ այն դարձնելով ավելի արդյունավետ: Նաև աշակերտների ուշադրությանն եմ հրավիրել խոսքի պատկերավորման միջոցներին, որոնք տեքստն ավելի գեղեցիկ են դարձնում: Ելնելով կրթական համակարգում մայրենի առարկայի առանձնահատուկ դերից ու նշանակությունից, մայրենիի դասաժամերի ընթերցանությունն ու նյութի վերարտադրումը ենթադրում է կրթադաստիարակչական բնույթի մի շարք պահանջներ: Հեքիաթի միջոցով փորձել եմ նաև դաստիարակել երեխաների մեջ մարդկային բարձր արժեքներ: Իմ ուսուցման գործընթացն այնպես եմ կառուցել, որ աշակերտը ինքնակատարելագործվի, նախաձեռնող լինի, ակտիվություն ցուցաբերի դասերին, պատասխանատու լինի, իր առջև դրված խնդիրը հասկանալու և լուծելու կարողություն ունենա: Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ «Գորգի տակ» հեքիաթը: Ընտրել եմ 3-րդ դասարանը, քանի որ մի քանի աշակերտ թույլ են կապակցված խոսք կազմելու, գրագետ և ճիշտ խոսք կառուցելու, նյութը վերապատմելու, իմացածը ստեղծագործաբար կիրառելու կարողություններից: Աշխատելով աշակերտների հետ՝ ես բացահայտել եմ նրանց թույլ և ուժեղ կողմերը, թիրախային խմբի աշակերտներին , սահմանել եմ նպատակներ և այդ նպատակների իրականացման համար կիրառել եմ տարբեր մեթոդներ ու դասի ոչ ավանդական հնարներ : Սահմանել եմ հետևյալ նպատակները՝

· Վերհիշել հեքիաթագիրներին և հեքիաթները

· Ըմբռնել հեքիաթի հիմնական գաղափարը

·Զնավորել բարության, աշխատասիրության, բարի գործ կատարելու պատրաստակամություն

.Զարգացնել աշակերտների երևակայությունը

· Զարգացնել աշակերտների գեղագիտական ճաշակը

· Զնավորել հեքիաթի նկարագարդման հմտություններ

. Զարգացնել պատմողական խոսքը

· Հարստացնել բառապաշարը

· Զարգացնել ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը

Կիրառել եմ հետաքրքիր մեթոդներ, աշակերտները ոգևորությամբ են աշխատել: Կիրառել եմ ԳՈՒՍ մեթոդը, որն իմ կարծիքով շատ արդյունավետ է աշակերտների բանավոր խոսքը զարգացնելու, դասը կենդանի և աշխույժ դարձնելու համար: Այս մեթոդի միջոցով ես պատկերացում եմ կազմել աշակերտների՝ տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքների մասին: Աշակերտները նաև կարողանում էին կարդացվելիք նյութի մասին ենթադրություններ անել :Այս մեթոդը օգնեց նաև այնքանով, որ աշակերտի ինքնահարցման, ինքնավերլուծության հմտություններն էլ ավելի

զարգացան:Կատարեցին խմբային աշխատանք, դիտեցին մուլտֆիլմեր, որը նպաստեց աշակերտների երևակայության և ուշադրության կենտրոնացմանը: Կարևորել եմ դերային խաղը, քանի որ այն աշակերտներին օգնել է գտնել լսածի ու տեսածի միջև կապը, ինչպես նաև զարգացնում է աշակերտների պատկերային ու ստեղծագործ մտածողությունը, կարդալու հմտությունները: Շարունակելով ուսուցման ոչ ավանդական հնարների կիրառումը փորձել եմ հետևողականորեն զարգացնել աշակերտի ստեղծագործական ինքնուրույնության կարողությունները, նյութը ստեղծագործաբար պատմելու, վերապատմելու, շարադրանքը ավարտելու հմտությունները: Կիրառել եմ քառաբաժան մեթոդը:Այս մեթոդի օգնությամբ որոշել եմ աշակերտների գիտելիքների յուրացման աստիճանը: Այսպիսով, բոլոր դասերի արդյունքում կիրառելով ոչ ավանդական հնարները, ստուգելով աշակերտների նախնական գիտելիքները, ստեղծագործականության, ինուրույնության մակարդակը և վերլուծելով վերջնարդյունքները, պարզել եմ, որ աշակերտների մոտ ստեղծագործականության, նախաձեռնողականության զարգացման աճ է գրանցվել: Կարող եմ ասել, որ հասել եմ իմ առջև դրված նպատակի իրագործմանը և ստացել բավարար վերջնարդյունք:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք ունի վերլուծության առանձնահատկություններ:Աշխատելով 3-րդ դասարանի թիրախային խմբի աշակերտների հետ, բացահայտելով նրանց թույլ և ուժեղ կողմերը՝ դասի համար սահմանել էի նպատակներ և այդ նպատակներին հասնելու համար կիրառել եմ դասի ոչ ավանդական հնարներ: Պարզել եմ, որ կային ցածր և միջին ակտիվությամբ ստեղծագործականության ունակություններով օժտված աշակերտներ: Այդ իսկ պատճառով փորձել եմ դասերին կիրառել ոչ ավանդական հնարները, նրանց մոտ ստեղծագործական կարողությունները, երևակայությունը, կապակցված խոսք կազմելու ունակությունները զարգացնելու նպատակով: Աշակերտները հորինել են հեքիաթ, դիտել են մուլտֆիլմեր, կատարել են նկարազարդում, դերային խաղ և այլ առաջադրանքներ:Իմ հետազոտության ընթացքը դիտարկելով , յուրաքանչյուր դասին կատարված անդրադարձներով , թիրախային խմբի աշակերտների ուսումնական վարքագիծը , թեմայի յուրացումը ստուգող աշխատանքների արդյունքները գնահատելով ու վերլուծելով, կարող եմ ասել, որ հասել եմ իմ առջև դրված նպատակների իրագործմանը և վերջնարդյունքների կատարմանը: Որպես սովորողների երևակայական ներուժ՝ ստեղծագործական ունակությունների զարգացումը մայրենիի դասընթացի միջոցով փորձարարական է եղել և հետաքրքիր: Կատարված աշխատանքի համատեքստում կիրառված ոչ ավանդական հնարներն ու մեթոդները ճիշտ էին ընտրված և ծառայել են իմ նպատակների իրագործմանը: Սովորողների մոտ ստեղծարար ունակությունների մակարդակը կարելի է գնահատել դրական: Հեքիաթը զարգացնում է կրտսեր դպրոցականների

ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական կարողությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Հեքիաթները օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Ուստի անհրաժեշտ է հեքիաթների տարբեր տեսակների առկայությունից ընտրելով համապատասխանը՝ նպաստել երեխայի աշխարհաճանաչողական, երևակայական, ստեղծագործական և խոսակցական մակարդակների իրացմանը համապատասխան մեթոդների կիրառմամբ:Ելնելով տեսական վերլուծությունից և փորձարարական արդյունքների ամփոփումից, կատարել եմ հետևյալ եզրակացությունները.

· Թեև դժվարին, բայց լուծելի խնդիր է դպրոցահասակ երեխաների մոտ ստեղծարարության զարգացումը այն միտումով , որ նա ունենա ուրույն մտածողության, վառ երևակայության, ինքնազարգացման ու առաջընթացի մեծ ձգտում:

· Ժամանակակից մեթոդները տալիս են մեզ այդ հնարավորությունները:

· Հեքիաթները նպաստում են երեխաների ստեղծարարության, ինքնուրույնության զարգացմանը:

· Ստեղծագործական ներուժ ունեցող երեխաները տարբերվում են իրենց մտածելակերպով, ինչպես նաև իրենց տարիքի համար միջինից բարձր ինտելեկտով:

· Դեռ անելիքներ կան , մեթոդների մշակման հետ կապված ՝ ըստ աշակերտների առանձնահատկությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ամիրջանյան Յու. Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, «Մանկավարժ», 2005

- Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, Գիրք II, Երևան, 2005
- Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995
- Տեր-Գրիգորյան Ա. , Հայոց լեզվի մեթոդիկա:Տարրական դասարաններ,Երևան,1980
- Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Երևան, 2006
- Նախաշավիղ գիտամեթոդական հանդես 1-2, Երևան, 2004

Ընտրի՛ր ճիշտ տարբերակը՝
ա)<<Կիկոսի մահը>>
բ)<<Տերև ու ծառան>>
գ)<<Սուտլիկ որսկանը>>

Ընտրի՛ր ճիշտ տարբերակը՝
ա) <<Մատնաչափիկը>>
բ)<<Կարմիր գլխարկը>>
գ)<<Անբան Հուռին>>

Ընտրի՛ր ճիշտ տարբերակը՝
Գյուղ կանգնի...
ա)շաղգամը հողից կհանի
բ)գերան կկոտրի
գ)պապիկին կօգնի